

ԿՐԿՆԱՍԵՌՈՒԹՅԱՆ ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒ

Ց. Վ. ՍԱՖԱՐՅԱՆ

Կրկնաստեղծության երևույթը քննությանն նյութ է դարձել միայն անցյալ դարի 60-ական թվականներից. բավականին հստակ ընկալելի էր իմաստային կրկնաստեղծությունը, երբ բայը առանց որևէ փոփոխության գործածվում է ներգործական և չեզոք սեռերի իմաստներով: Բայց սեռային երկակի կիրառության դեպքեր նկատվում են ոչ միայն իմաստաբանության, այլև ձևաբանության և շարահյուսության ոլորտներում, ինչը հիմք է տալիս առանձնացնելու նաև կրկնաստեղծության քերականական դրսևորումները, որոնց սահմանների ճշգրտման դժվարությունները կապվում են սեռի բնորոշման բարդությունների հետ:

Սեռը բայի ամենաբնորոշ քերականական կարգերից է, բայց մինչև այսօր հաղթահարված չեն նրա քանակի և ըմբռնման վերաբերյալ շատ տարակարծություններ: Լինելով բայի ձևաբանական հատկանիշներից մեկը՝ սեռի որոշ առանձնահատկություններ, ինչպես, օրինակ, գործողության հարաբերությունը ենթակայի և խնդրի հետ, պարզաբանվում են շարահյուսական մակարդակում: Ահա թե ինչու մնում են դժվար հստակեցվող հարցեր, որոնք պատճառ են դառնում, որ երբեմն առանձնացվի հինգ սեռ, երբեմն բային բնորոշ համարվի միայն երկու սեռ: Թվում է՝ երևույթը ավելի որոշակի ու ընդգրկուն է ներկայացվում անցողականություն և անանցողականություն ձևակերպումներով:

Սեռի հատկանիշները առանձնացրել են Մ. Չամչյանը, Գ. Ավետիքյանը, Խ. Աբովյանը, Ա. Գարագաշյանը, Ստ. Պալասանյանը, այն ավելի հետևողական ու ամբողջական քննության առարկա են դարձրել Մ. Աբեղյանը և մեր ժամանակի շատ լեզվաբաններ: Սեռային բաժանման հիմքը, ըստ Աբեղյանի, կրող խնդիրն է. «Կրող խնդրի նկատմամբ բոլոր բայերը բաժանվում են երկու տեսակի կամ սեռի՝ անցողական և անանցողական»¹: Անցողական բայերը ունեն կրող խնդիր, անանցողական բայերը այդպիսին չունեն: Այնուհետև այս խմբերի մեջ առանձնացվում են սեռերը. անցողական բայերի մեջ՝ ներգործական և պատճառական, անանցողականի մեջ՝ կրավորական և չեզոք:

Այսինքն՝ Աբեղյանն ընդունում է չորս սեռ՝ սկզբնաձևերի մեջ դիտելով նաև պատճառական և կրավորական բայերը:

Էդ. Աղայանը սեռի կարգը քննում է երկու հարաբերությամբ՝ մի կողմից՝ ենթակայի և գործողության, մյուս կողմից՝ գործողության ու խնդրի: Առաջինի մեջ առանձնացնում է ներգործական, կրավորական և չեզոք սեռերը, իսկ երկրորդի մեջ՝ անցողական և անանցողական սեռերը: Անցողականի մեջ Աղայանը դիտում է ներգործական և պատճառական սեռի բայերը, իսկ անանցողականը դրսևորվում է չորս սեռով՝ չեզոք, կրավորական, անդրադարձ, փոխադարձ: Առանձնացնելով անցողականությունը և սեռը՝ Էդ. Աղայանը նշում է. «Անցողականության և անանցողականության քերականական կարգը արտահայտում է գործողի և գործողության առարկայի հարաբերությունը՝ բայի երկկողմանի հարաբերությամբ կամ դրա բացակայությամբ, մինչդեռ սեռերն արտահայտում են գործողի ու գործողության հարաբերություն»²:

¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 375:

² Էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 322:

Ակադեմիկոս Գ. Զահուկյանը սեռի հարցին անդրադառնում է բայի սեռի և տիպարի կարգը քննելիս: Նա առանձնացնում է *-եց, -աց, Գ-, չ-* և այլ հիմնական տիպարային տարբերակիչներ և նշում, որ «երկրորդաբար տիպարային արժեք են ձեռք բերում բաղադրյալ (ա, ե) ց (ն/ր) և պարզ վ մասնիկները, որոնց բուն ֆունկցիան սեռային տարբերությունների արտահայտումն է, այսինքն՝ հաղորդակցային պլանի սպասարկումը»¹: Որպես սեռանիշ մասնիկները սրանք արտահայտում են անցողականություն՝ *կարդա-ցն-ել (կարդացրել), վազե-ցն-ել (վազեցրել), գրվել*: Իսկ *-աց, ան/աց, չ* մասնիկները հանդես են գալիս «որպես անանցողականության կամ վիճակայնության արտահայտիչներ»²: Օրինակ. *խաղ-աց, հեռ-ան-այ (հեռ-աց-այ)*: Թեև այս կաղապարների մեջ էլ կարող ենք ունենալ անցողականություն: Օրինակ. *կարդ-աց, գող-ան-այ (գող-աց-այ)*: Ստանում ենք «անցողականություն-անանցողականություն հակադրությունների համատեղում»³: Բուն սեռանիշ մասնիկներն են դիտվում (ա, ե) ց (ն/ր) և վ տարբերակիչները, որոնցից վ դիրքային տարբերակներ չունի, նրա առկայությունը նշանակում է կրավորականություն: Իսկ ներգործականը ի վերջո հավասարաբար է գործողությանը, չեզոքը՝ վիճակայնությանը: «Սեռանիշ մասնիկները ծառայում են հաղորդակցման պլանին և արտահայտում են եղելության (գործողության) հեղինակի օտարումը եղելությունից (գործողությունից)»⁴: Քանի որ վ-ն նշում է գործողության ուղղվածությունը և ցույց է տալիս հեղինակի օտարումը, ուստի վ կարող են ստանալ այն բայերը, որոնք ենթադրում են պատճառ և հետևանք, ներգործող և ներգործվող: Ըստ այդմ վ չեն կարող ստանալ այն բայերը, որոնք բնութագրվում են եղելությանմբ, վիճակով, շարժմամբ (դեղնել, քնել, գնալ և այլն): Վ-ն արտահայտում է նաև անդրադարձություն, փոխադարձություն (հագնվել, համբուրվել): Կան բայեր, որոնք առանց վ-ի չեն գործածվում (սիրահարվել, հարձակվել): Վ-ի հետ կապված, երբ գործողը չի նշվում, իմացական (տիպարային) և հաղորդակցային (սեռի) պլանների հակադրությունը չեզոքանում է, և «կրավորական – ոչ կրավորական (ներգործական) սեռային հակադրության փոխարեն հանդես է գալիս անցողական-անանցողական տիպարային հակադրությունը»⁵: Օրինակ. *գլորեցի - գլորվեցի* (ի նքս, մեկի կողմից):

Սեռի քերականական կարգը հանգամանալի քննության է ենթարկում Աշոտ Աբրահամյանը: Ըստ նրա՝ «սեռի կարգի նշանակությունը բնութագրելիս պետք է հաշվի առնել՝ ա) գործողության կամ եղելության որոշ կարգի ուղղվածությունը իբրև հարաբերում գործող կամ եղող ելակետին և առարկայական վախճանակետին, բ) գործող կամ եղող ելակետի և առարկայական վախճանակետի փոխհարաբերությունը»⁶: Ելակետն ու վախճանակետը տրամաբանական սուբյեկտն ու օբյեկտն են, որոնք կարող են համընկնել քերականական ենթակայի ու խնդրի հետ կամ չհամընկնել:

Այսպիսով, սեռի ձևաբանական և շարահյուսական հատկանիշների, ինչպես նաև անցողականություն - անանցողականություն երկուսի հետ նրա հարաբերության չլուծված հարցերը հասկանալիորեն տարակարծություններ են թողնում կրկնասեռության ըմբռնման մեջ: Ծատ ավելի հստակ է իմաստային կրկնասեռության սահմանը, երբ բայը առանց ձևային փոփոխության կարող է երկու սեռային գործածություն ունենալ՝ ստանալով շարահյուսական ու ռեական տարբեր արտահայտություններ: Կրկնասեռության քերականական դրսևորումները առնչվում են

¹ Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 258:

² Նույն տեղում, էջ 260:

³ Նույն տեղում, էջ 262:

⁴ Նույն տեղում, էջ 266:

⁵ Նույն տեղում, էջ 271:

⁶ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1-ին, Եր., 1962, էջ 491:

բայի ձևաբանական փոփոխություններին ու նախադասության շարահյուսական կառուցվածքին՝ իհարկե պահպանելով կապը բայիմաստի հետ:

Կրկնաստեղության մասին խոսել են տարբեր լեզվաբաններ (Ս. Աբրահամյան, Էդ. Աղայան, Ն. Պառնասյան, Ա. Մուրվայան և այլք), բայց այն ամբողջական քննության է ենթարկվել Աշոտ Աբրահամյանի կողմից: Նա տալիս է կրկնաստեղության հետևյալ սահմանումը. «Կրկնաստեղ են այն բայերը, որոնք բառարանային միավոր հանդիսացող բայական մի ընդհանուր բառույթի մեջ այս կամ այն չափով պարունակում են երկու սեռի՝ ներգործականի և չեզոքի հատկանիշներ»⁹: Ա. Աբրահամյանի խմբավորման որոշ սկզբունքներ հիմք ընդունելով՝ նպատակահարմար ենք գտնում դիտարկել կրկնաստեղության քերականական հետևյալ դրսևորումները.

1. Խնդրառության հետ կապված կրկնաստեղություն, երբ սեռային տեղաշարժեր են առաջանում սեռի և խնդրառական փոփոխության հիման վրա:

2. Կրկնաստեղություն՝ կապված բայի լծորդության փոփոխության հետ: Այս երևույթով կրկնաստեղ բայեր առաջանում են լծորդության պատմական փոփոխության և նույնացման հիման վրա:

3. Կրկնաստեղություն՝ պայմանավորված կրավորական և չեզոք սեռերի կիրառությամբ: Արտահայտման այս երևույթի ժամանակ նույն բայը կարող է գործածվել և՛ կրավորական, և՛ չեզոք սեռերի նշանակությամբ:

Այս խմբերը կրկնաստեղության քերականական դրսևորումների հիմնական միջոցներն են:

Խնդրառության հետ կապված՝ կրկնաստեղության մեջ կրկնաստեղ բայերն ու իմաստային փոփոխություններից առաջացածներն իրար հետ կապված են, որովհետև բայի իմաստային նրբերանգներից, տարբերակներից նույնպես ձևավորվում են սեռային տեղաշարժեր: Այսինքն՝ սեռային անցումների պատճառ կարող են դառնալ խնդրառական փոփոխությունները: Սեռային տեղաշարժեր կատարվում են ոչ միայն գրաբարից ժամանակակից հայերեն, այլ նաև տվյալ փուլում, այսինքն՝ ժամանակակից հայոց լեզվի ներսում: Նման անցումներ լինում են հիմնականում չեզոք սեռից ներգործական սեռին, այսինքն՝ բայը անանցողականից դառնում է անցողական, թեև որոշ բայերի դեպքում նկատվում է հակառակ երևույթը՝ անցում ներգործականից չեզոքին: Այս կրկնաստեղ բայերը ծագել են ոչ թե կտրուկ փոփոխության, այլ երկարատև զարգացման հետևանքով: Սեռային տեղաշարժերը լեզվի տարբեր շրջաններում ունեն տարբեր պատկեր: Հաճախ այնպես է ստացվում, որ բայը իր հին սեռային հատկանիշը պահում է, և դրա հետ մեկտեղ, առաջ է գալիս նորը: Այդպես, նույն բայը որոշ ժամանակ հանդես է գալիս երկու սեռային հատկանիշներով, մինչև որ նոր սեռային հատկանիշը կդառնա տվյալ բայի համար օրինաչափ, իսկ հինը կդադարի գոյություն ունենալուց: Սա նշանակում է, որ երբեմնի կրկնաստեղ բայը ժամանակի ընթացքում կարող է դադարել այդպիսին լինելուց ու վերածվել միասեռ բայի: Բայց ժամանակակից հայերենում կան դեպքեր, երբ սեռային անցումը ըստ էության ավարտված չէ, այսինքն՝ տվյալ բայը պահպանում է երկու սեռ: Հենց այդպիսի բայերն են համարվում կրկնասեռ: Օրինակ. *գերազանցել, գրոհել, թագավորել, իշխել, ծափահարել, ձենձարկել* և այլ բայեր չեզոք սեռից անցել են ներգործական սեռի՝ միասեռանակ պահելով չեզոք սեռի հատկանիշները: Կամ *այցելել, ափսոսել, գգվել* և այլ բայեր ներգործականից անցնելով չեզոք սեռի՝ պահել են նաև ներգործական և չեզոք սեռերի հատկանիշները:

Ժամանակակից հայերենում գոյություն ունեն այնպիսի բայեր, որոնց արտահայտած գործողության իմաստին հատուկ է անցման գաղափարը: Սակայն դա ոչ բոլոր դեպքերում է հանդես գալիս ներգործական սեռի բայերի նման: Այդ

⁹ Նույն տեղում, էջ 703:

բայերի արտահայտած անցման գաղափարը ունի երկակի բնույթ՝ մի դեպքում անցումը լիակատար է ներգործական բայերի մասն, իսկ մյուս դեպքում՝ մասնակի, որի ժամանակ անցումը որոշ չափով է առնչվում գործողության առարկայի հետ: Բնականաբար այս բայերի խնդրառությունը պետք է ունենա երկակի բնույթ՝ մեկ արտահայտվի ուղղականով (հայցականով), իսկ մեկ այլ դեպքում տրականի կամ տրականի իմաստ արտահայտող կապական կառույցով: Հետևաբար սրանք ևս կրկնաւեռ են: Օրինակ. «*Երեխաները անընդհատ խանգարում են ծնողների գործերին*», «*Այդ աշակերտը շատ է խանգարում դասերին*»: Բերված նախադասություններում խանգարել բայն ունի գործողության անցման մասնակի գաղափար, ուստի *գործերին*, *դասերին* բառերին առնչվելով մասնակիորեն՝ դրվել են տրական հոլովով: Բերված օրինակներում *խանգարել* բայը գործածվել է չեզոք սեռի նշանակությամբ: Իսկ «*Գիշերները փոքրիկը խանգարում է մոր քունը*», «*Ես այնքան բարձր էի խոսում, որ խանգարեցի նրանց գրույցը*» նախադասություններում *խանգարել* բայը հանդես է գալիս գործողության լիակատար անցման նշանակությամբ և առարկայի հետ առնչվում է ամբողջովին, ուստի խնդիրն արտահայտված է ուղղական (հայցական) հոլովով, և *խանգարել* բայը գործածվել է ներգործական սեռի նշանակությամբ: Քանի որ *խանգարել* բայը առաջին հերթին ունի ներգործական սեռի կիրառություն, ըստ այդմ՝ ոմանք այն համարում են միայն ներգործական սեռի: Բայց անժխտելի է նաև այս բայի չեզոք կիրառությունը: Ա. Արբահամյանը իրավացիորեն գտնում է, որ «եթե գործողության ելակետով իշխում է ներգործական նշանակությունը, ապա վախճանակետով երևան է գալիս նաև չեզոք նշանակությունը (խանգարել, վնասել մի բան և մի բանի)»¹⁰:

Բացի անմիջական խնդրառությունից՝ գործողության անցման մասնակի և լիակատար նշանակությունը կարող է արտահայտվել նաև ոչ անմիջական խնդրառությամբ, այսինքն՝ կապով և հոլովաձևով: Հաճախադեպ է մասին, երբեմն նաև վրա կապերի կիրառությունը, ինչը հանդիպում է ասացական, իմացական և նման կարգի մի քանի բայերի հետ՝ *վկայել, ճանել, զրարանել, չարախոսել, պերճախոսել, ճամարտակել* և այլն: Օրինակ. «*Նա շատ է չարախոսում ընկերների մասին*», կամ «*Նա շատ է չարախոսում ընկերներին*»: Ա. Արբահամյանի կարծիքով, դա հետևանք է սեռի հետ կապված որոշ հանգամանքների, «որոնք նշված խնդրառության հետ հիմք են ծառայում սրանց մեջ չեզոք սեռի հատկանիշը ներգործականի հետ ընդունելու համար»¹¹:

Հայտնի է, որ ժամանակակից հայոց լեզվում չեզոք սեռի բայերը ուղղական հոլովով խնդիր պահանջելու հատկություն չունեն: Բայց կան մի շարք չեզոք բայեր, որոնց գործողության կատարման համար պահանջվում է մի առարկա, որը դրված է ոչ թե որպես ուղիղ խնդիր, այլ որպես հանգման խնդիր: «Այդ բայերի գործողության բնույթը հիմք է հանդիսացել, որ քերականական նմանությամբ այս բայերի մի մասը ընդունի ոչ միայն հանգման խնդիր, այլ դրան զուգահեռ՝ նաև ուղիղ խնդիր, որը ի վերջո հանգեցնում է չեզոք սեռ > ներգործական սեռ սեռային տեղաշարժի»¹²: Օրինակ. «*Բանտապահը ուշադիր հսկում էր բոլոր բանտարկյալներին*»: Նույն բայը կարող է նաև կապական կապակցությամբ խնդիր պահանջել՝ «*Անգղը հսկում էր շրջակա ժայռերի վրա*»: Այս նախադասություններում *հսկել* բայը ընդունել է տրական հոլովով անուղղակի խնդիր (բանտարկյալներին, ժայռերի վրա): Մինչդեռ հաճախ գործողությունը կարող է դառնալ ուղղակի անցումնային. նման դեպքերում բայը ձեռք է բերում ներգործական սեռի անցողական հատկանիշ: Օրինակ. «*Հաղթ նստել էր նրա առաջ ու տիրուհու կամքին գերի // Երթն էր հսկում գետնատարած, երկաթգծի ուղիների*» (ԵՉ, 150):

¹⁰ Նույն տեղում, էջ 713:

¹¹ Նույն տեղում, էջ 714:

¹² Ա. Արբահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1974, էջ 307:

Այսինքն՝ *հսկել* բայը այժմ հանդես է գալիս ներգործական սեռի նշանակությամբ՝ ունենալով անցողական հատկանիշ, բայց պահում է չեզոք սեռի կիրառությունը՝ ունենալով նաև անանցողական հատկանիշ: Նման բայերից են՝ *ծափահարել, կարոտել, գրոհել, դիմավորել, գերազանցել, ունկնդրել, ձեռնարկել, տիրել, սպասարկել, հուսալ, տենչալ* և այլն:

Օրինակ. «*Թե տիրես, մեծ Շահ, դու նըրա սըրտին, // Թաթուլն էլ անգոր կընկնի ոտիդ տակ*» (ՀԹ, 250):

«*Նրա սրտի վրա անանց թախիծ է տիրում*»:

«*Թշնամին տիրեց անառիկ բերդը*»:

Սեռային տեղաշարժը, իբրև կանոն, ավելի շատ լինում է չեզոքից ներգործական, բայց պատահում է նաև հակառակը՝ ներգործականից չեզոքին: Օրինակ. *ողջունել* բայը ներգործական սեռի է («*Տնօրենը ողջունեց շրջանավարտների հավաքը*»), բայց կարող է ունենալ նաև չեզոք սեռի կիրառություն՝ «*Բանաստեղծը ողջունում է քաղաքներին ու գյուղերին*»: Նման բայերից են նաև *ափսոսալ, գգվել* և այլն:

Ժամանակակից հայերենում խնդրառությամբ պայմանավորված կրկնաեսությունն դրսևորում են հետևյալ բայերը՝ *ակնարկել, ախորժել, աղաղակել, այցելել, բախել, բավել, գերազանցել, գերիշխել, գլխավորել, գրոհել, դաշնակել, զանգահարել, զարկել, զեկուցել, զիջել, զղջալ, ըղձալ, ընկերակցել, թախսանձել, ծխորել, իշխել, խարդախել, ծափահարել, կոխել, կոչել, հաճախել, հավատալ, հոգալ, ձեռնարկել, նպատակամիտել, շամփրել, ռճապատճենել, պաղատել, պատասխանել, սովորել, սպառնալ, սպասել, վայրաբանել, տիրել, տրոփել, փսփսալ* և այլն:

Ամփոփելով սեռային տեղաշարժերի մասին ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ չեզոք սեռից ներգործականի անցումը պայմանավորված է ուղղական խնդրառությամբ, իսկ հակառակ անցումը, Ա. Աբրահամյանի կարծիքով, «ուղիղ խնդրի պահանջի անքնականությամբ կամ նույնպես չեզոք սեռի բայերին հատուկ անուղղակի - առարկայական խնդրառությամբ»¹³: Նման երևույթը Ա. Աբրահամյանի գնահատմամբ «որոշ քանակություն կազմող բայերի մեջ պետք է ընդունել որպես տվյալ բայերի սեռի յուրահատուկ պատմական զարգացում և ոչ իբրև նրա քայքայում»¹⁴:

Ժամանակակից հայերենում կան մի շարք այնպիսի բայեր, որոնք ուղղական հոլովով խնդիր են ընդունում իրենց արմատ-բառը կամ համանիշ մեկ այլ արմատական բառ: Այս երևույթը քերականության մեջ կոչվում է ներքին խնդրառություն: Այսպիսի խնդրառությամբ կարող են հանդես գալ ինչպես չեզոք սեռի, այնպես էլ ներգործական սեռի բայերը. *երգել, գրուցել, խաղալ, խոսել, ծխել, ծրտել, ողբալ, սգալ, կովել, ճգնել, ննջալ, ծխալ, պարել, սուլել, լացել, շնչել* և այլն:

Օրինակ. «*Մուխ են ծխում խաշամի կույտերը*» (Հր.Մ, 5):

«*Իբր թե պարում է հարսի պար և ծիծաղում*» (Հր.Մ, 6):

«*...Ո՛չ, քեզ համար այսպիսի երգ // Երգելու չեմ ես երբեք*» (ՀԹ, 23):

«*Ես շընչում եմ միշտ կենդանի // Աստծու շունչը ամենուր*» (ՀԹ, 73):

«*Մեր բերանը հավաքեցինք, որ սուլենք իր կանչի սուլոցը*» (Հր.Մ, 384):

Բերված օրինակներում *ծխալ, պարել, երգել, շնչել, սուլել* բայերը որպես ուղիղ խնդիր վերցրել են իրենց իսկ արմատ - բառը՝ *ծուխ, պար, երգ, շունչ, սուլոց*: Բայց, ինչպես նշեցինք, այդպիսի բայերը կարող են որպես ուղիղ խնդիր վերցնել նաև համանիշ արմատական բառ: Օրինակ. «*Արջերը պար են խաղում*» (ԱԲ, 28): «*Դառնադի ողբ են երգում գյուղի կանաչը*» (ԱԲ, 217):

Ըստ Ա. Աբրահամյանի, չեզոք սեռի նման կիրառություն ունեցող բայերում չի կարելի ներգործական սեռի հատկանիշ տեսնել: Սրանք չունեն ոչ մի իմաստային

¹³ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 702:

¹⁴ Նույն տեղում, էջ 700:

փոփոխություն և ոչ էլ փոխաբերական կիրառություններ: «Նման դեպքերում բայը իր յուրատեսակ շարունակությունն է գտնում ներքին խնդրի մեջ»¹⁵: Ն. Պառնասյանը նույնպես գտնում է, որ այսպիսի կիրառություններում բայը մնում է չեզոք սեռի՝ չփոխելով սեռային որևէ հատկանիշ: Սակայն, հիմք ընդունելով շարահյուսական կաղապարը (երգ // երգել, հիմնը // երգել), կարծում ենք, չպետք է ամստեսել, որ Աշված չեզոք բայերը թեկուզ իրենց արմատ - բառը կամ համանիշ արմատական բառը ընդունել են ուղիղ խնդիր: Այսինքն՝ այս բայերը մնան կիրառություններում ունեն ներգործական սեռի նշանակություն՝ ցուցաբերելով կրկնաստեղծություն:

Ժամանակակից հայերենի կրկնաստեղծության դրսևորումներից մեկը կապված է լծորդության փոփոխության հետ: Գրաբարում և խոնարհման ներգործական բայերը սահմանական ներկայում ունեն -եմ, -ես, -է... վերջավորությունները, իսկ կրավորական խոնարհման բայերը՝ -իմ, -իս, -ի... վերջավորությունները: Իսկ ա, ի, ու խոնարհման բայերը հիմնականում նույն վերջավորություններն են ստանում ներգործական, կրավորական, չեզոք սեռերի համար: Այսպես. խաղամ նշանակում է՝ *խաղում եմ // խաղացվում եմ, լնում լցնում եմ // լցվում եմ, ծնալ՝ ծնեց // ծնվեց*: Իսկ միջին հայերենը չնայած արդեն ձևաբանորեն տարբերակում է երեք սեռերը՝ ներգործական՝ ել վերջավորությամբ (բաժնեմ, եփեմ, այրեմ), չեզոք՝ իլ վերջավորությամբ (բաժնիմ, եփիմ, այրիմ), կրավորական՝ ուիլ վերջավորությամբ (բաժնուիմ, եփուիմ, այրուիմ), բայց այս երևույթը կայուն օրինակաչափություն չի դառնում, և միջին հայերենում ի լծորդություն են ունենում նաև ներգործական բայերը (ունիմ, տանիմ, ընդունիմ): Վերլուծելով այս երևույթը՝ Հ. Բարսեղյանը գրում է. «Սեռի քերականական հասկացության դրսևորման տեսակետից արդի հայերենը ավելի կատարյալ է, քան միջին հայերենը և առավել ևս՝ քան գրաբարը»¹⁶:

Ժամանակակից հայոց լեզվում և խոնարհման մի շարք բայեր սեռային գույնահեռություններ դրսևորում են «լծորդությունների՝ պատմականորեն կատարված միօրինականացման»¹⁷ հետևանքով: Գրաբարում կան և - ի լծորդություններին պատկանող բայեր, որոնք ունեցել են և՛ ներգործական, և՛ չեզոք սեռի կիրառություն, ժամանակակից հայերենում ի լծորդության վերացման հետևանքով հանդես են գալիս և խոնարհմամբ, բայց շարունակում են գործածվել ինչպես ներգործական, այնպես էլ չեզոք սեռի նշանակությամբ: Անցյալում *մարել, մեղմել, երկարել, խամրել, խոռվել* և այլ բայեր թեև ձևով եղել են ներգործական, բայց ի լծորդությամբ գործածվելիս՝ *մարիլ, մեղմիլ, երկարիլ, խամրիլ, խոռվիլ*, դրսևորել են չեզոք իմաստ: Ներկայումս այդ նույն բայերը և լծորդությամբ հանդես են գալիս թե՛ ներգործական և թե՛ չեզոք սեռի կիրառությամբ: Հետևաբար դրանք ևս կարող ենք համարել կրկնասեռ բայեր: Օրինակ. «*Իմ աչքերի մեջ այնքան կրակներ եմ մարել // Եվ հոգուս մեջ, հուսահատ, այնքան աստղեր եմ մարել*» (Չ, 254):

Այս նախադասության մեջ մարել բայը գործածվել է ներգործական սեռի նշանակությամբ, մինչդեռ «*կյանքս կանցնի, կմարի - բայց երգս կա, կսպրի դեռ*» (Չ, 254) օրինակում այն ունի չեզոք սեռի իմաստ: Ըստ այդմ, գտնում ենք, որ այս և մնան մի շարք բայեր, չեզոք և ներգործական սեռերով գործածվելիս, չունենալով լծորդության որևէ փոփոխություն, նույնպես ցուցաբերում են կրկնաստեղծության երևույթ:

Արդի հայերենում, ինչպես նշեցինք, բուն կրկնաստեղծությունը թեև արտահայտվում է հիմնականում ներգործական և չեզոք բայերի միջև, բայց առանձին

¹⁵ Նույն տեղում, էջ 679:

¹⁶ Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., 1953, էջ 26:

¹⁷ Ա. Արրահամյան, Աշվ. աշխ., էջ 714:

դեպքերում կրավորական բայերը նույնպես կարող են առանց որևէ փոփոխության գործածվել ինչպես կրավորական, այնպես էլ չեզոք սեռով: Ժամանակակից հայոց լեզվում ունենք ներգործականներից կազմված կրավորականներ, որոնք կարող են կիրառվել և՛ կրավորական, և՛ չեզոք սեռով: Այս բայերի չեզոք սեռը արտահայտվում է կրավորական ձևի միջոցով: Օրինակ. *ազատագրվել, ածիլվել, աղավաղվել, ամբարվել, արձանագրվել, բռնվել, բազմապատկվել, բաժանվել, բախվել, բարելավվել, բացվել, թեքվել, լցվել, հանձնվել, նեղվել, շարժվել, պատրաստվել, պահպանվել, սկսվել, վերադարձվել, տեղավորվել, տրորվել, օրորվել* և այլն:

«Սենյակի դուռը բացվեց ուժեղ հարվածից»: «*Հեռագրասյունը թեքվում է ուժեղ քամուց»:* «*Գյուղացիները նեղվում են ծանր հարկերից»:* «*Քաղաքը փոթորկի մեջ ընկած նավի պես օրորվում էր երկրաշարժից»:* «*Հիմնարկի բոլոր թերությունները արձանագրվել են ստուգողների կողմից»:* «*Ոստիկանների կողմից վերադարձվեց ամբողջ գողոնը»:* «*Երկրի երեսը տրորվել է բազում արհավիրքներից»:*

Բերված օրինակներում բացվել, թեքվել, նեղվել, օրորվել, արձանագրվել, վերադարձվել, տրորվել բայերը գործածվել են կրավորական սեռի նշանակությամբ, քանի որ ունեն ներգործող խնդիրներ: Իսկ այժմ բերենք օրինակներ, որտեղ այս նույն բայերը ունեն չեզոք սեռի կիրառություն: «*Առավոտը բացվում էր, ձյունի վրա արյան շիթեր էին երևում»* (ԱԲ, 29): «*Հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում դեպի արևմուտք»* (ԱԲ, 28): «*Անհայրենիք ժողովուրդ են, այս վայրենի օտարության մեջ չեն նեղվում»* (Հր.Մ, 284): «*Քնի ու երազի սահմանում օրորվեց գիշերվա անիրական աշխարհը»* (ԱԲ, 117): «*Որպես գլխավոր փաստարկ՝ արձանագրվեց հարևանների վկայությունը»* («Օ2», № 45): «*Գործը կրկին վերադարձվեց ելման կետ»* («Օ2», № 2): «*Նրանց ահա այս քարն տաշտն է, խաղողը, որ տրորվում է դժվար»* (Հր.Մ, 19):

Արդի հայերենում կրավորական և չեզոք սեռերի նման կիրառություններ ունեն նաև հետևյալ բայերը՝ *ազատագրվել, ապաքինվել, ավանդվել, ավերվել, բուժվել, բքահարվել, գամվել, գտնվել, գունաթափվել, դատարկվել, դյուրվել, երկնեղքվել, գեղչվել, զինաթափվել, լայնացվել, լարվել, խճճվել, խոսվել, խորտակվել, ծամածոփվել, կարգադրվել, կողմնորոշվել, հակադրվել, հուզվել, հուսախաբվել, ձախողվել, ձերբակալվել, դեկավարվել, ճանաչվել, ճանապարհվել, մաղթվել, մերժվել, մխիթարվել, նկարահանվել, նկարվել, նմանվել, ողողվել, չափազանցվել, պատժվել, պատմվել, պատռվել, ջրփոխվել, ոմբակոծվել, սնանկացվել, ստորացվել, վարժվել, վերածնվել, տարբերվել, տեղաշարժվել, ցրվել, ցրտահարվել, ուղևորվել, փակվել, քննադատվել, քննարկվել, օծվել, օրհնվել, ֆինանսավորվել* և այլն:

Բայց ներգործականներից կազմված ոչ բոլոր կրավորական բայերն են, որ ունեն նաև չեզոք սեռի կիրառություն: Օրինակ. *ազդարարվել, առաքվել, արժեքավորվել, արհամարհվել, գնահատվել, գովաբանվել, թողարկվել, ծաղրվել, կալանավորվել, հարգվել, հերքվել, մատնանշվել, պարգևատրվել, սիրվել, ուղարկվել* և այլ բայերը միայն կրավորական սեռի են պատկանում և կրկնասեռ չեն: Ինչպես նաև կրավորական գործածություն ունեն պատճառականներից կազմված կրավորական սեռի բայերը: Օրինակ. *ամրացվել, աստվածացվել բարձրացվել, իջեցվել, հարստացվել, հեռացվել, մեղմացվել, նորացվել, փոքրացվել* և այլն:

Ժամանակակից հայերենում կրկնասեռ կարող են լինել կրավորակերպ չեզոք սեռի այն բայերը, որոնք ունեն անդրադարձության և փոխադարձության իմաստ: Բայց «անդրադարձությունն ու փոխադարձությունը քննարկվող համապատասխան բայերի միակ իմաստը չեն: Դրանք չեզոք սեռի սահմաններում դրսևորվող իմաստային երանգներ են՝ պայմանավորված շարահյուսական, խոս-

բային գործոճներով»¹⁶։ Սրանք նույնպես կարող են գործածվել կրավորական և չեզոք սեռով՝ առանց ձևային որևէ փոփոխություն կրելու։ Օրինակ. *գրկվել, զարդարվել, լվացվել, համբուրվել, հանվել, սրվել, փաթաթվել* և այլն։ Ա. Արրահամյանը այս բայերը համարում է «միջին - անդրադարձ սեռային առման» և կրկնասեռ չի դիտում, քանի որ դրանք մոտենում են կրավորական սեռին, բայց չեն նույնացնում, և երբեմն էլ՝ չեզոք սեռին, սակայն նորից չեն նույնացնում նրանց հետ։ Սակայն, թեկուզ խոսքային կամ շարահյուսական մակարդակում երկու սեռային կիրառությունը հաստատում է, որ այդ բայերը կարելի է համարել կրկնասեռ և դիտել երևույթի քերականական դրսևորումների մեջ՝ անկախ դրանց ոճական մասնակիությունից կամ ընդհանրական գործածությունից։ Այսպես, «*Երեխաների կողմից զարդարված տոնածառը ամբողջ շուքով շողում էր դահլիճում*», «*Պատահանի ապակիները մանրակրկիտ լվացվել էին տասիկի կողմից և փայլում էին արևի տակ*» նախադասություններում ունենք կրավորական կառույց։ Իսկ հետևյալ նախադասություններում նույն բայերը կիրառվել են չեզոք սեռի իմաստով։ «*Փոքրիկը զարդարվել էր և հուզված սպասում էր հանդեսի սկզբին*»։ «*Նա լվացվել էր ու զարմացած նայում էր մաքուր ձեռքերին*»։

Այսպիսով, սեռի և առավել ևս կրկնասեռության սահմանումների բարդությունները հասկանալի են դարձնում մանավանդ վերջինիս ճշգրիտ ընկալման դժվարությունները։ Համեմատաբար հստակ դրսևորվող իմաստային կրկնասեռությունից բացի այդ երևույթը նկատելի է նաև ձևաբանության և շարահյուսության շրջանակներում, քանի որ այն առնչվում է անցողականության և անանցողականության հետ, առաջադրում գործողության և խնդրի հարաբերությունը։ Սա հիմք է տալիս առանձնացնելու կրկնասեռության քերականական դրսևորումները՝ կապված խնդրատության, լծորդության փոփոխության և վ ցուցիչ գործածության հետ։ Սրանց կիրառությունները արդյունք են ինչպես լեզվի պատմական զարգացման, այնպես էլ արդի հայերենի խոսքային յուրահատկությունների և միջոտ ենթակա են փոփոխությունների, տվյալ շրջանին բնորոշ խոսքաոճային համատեքստում կրկնասեռություն հանդես բերող բայը կարող է դառնալ միասեռ և հակառակը, ուստի անխուսափելի է նրանց վերլուծության ժամանակ ցուցաբերվող պատմական վերաբերումները։

Համատոտագրություններ

- ԱԲ - Ակ. Բակունց, Երկեր, Եր., 1986:
 Ե2 - Ե. Չարենց, Երկեր, Եր., 1983:
 ՀԹ - Հ. Թումանյան, Ընտիր երկեր, Եր., 1978:
 ՀՐ.Մ - Հր. Մաթևոսյան, Տերը, Եր., 1983:
 Զ - Ե. Չարենց, Հատընտիր, Եր., 1983:
 «02» - Ծաբաթաթերթ «02», 2001, № 45:
 «02» - Ծաբաթաթերթ «02», 2002, № 2:

Т. В. САФАРЯН - Грамматические проявления двувидовых глаголов в современном армянском языке. - Наиболее характерным проявлением двувидовости глаголов является семантическое. Однако явление переходности-непереходности на синтаксическом уровне, так же, как разноспрягаемость глаголов и употребление указателя «վ» на морфологическом уровне, дают основания выделить и грамматические проявления двувидовости глаголов. Они имеют свои стилистические и прикладные особенности и подвержены историческим изменениям.

¹⁶ Ա. Արրահամյան, Փամանակակից հայերենի քերականություն, Եր., 1969, էջ 151: